**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3**

«ՀՀՌՑ-ԲՄԱՇՁԲ-18/19» ծածկագրով բաց մրցույթով
Երևանի H=308մ բարձրությամբ հեռուստաաշտարակի մետաղական կոնստրուկցիաների հակակոռոզիոն պաշտպանիչ շերտի վերականգնման և ներկման աշխատանքների
ձեռքբերման գնահատող հանձնաժողովի բացման նիստի

ք. Երևան

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 06.07.2018թ. ժամը 15.00-ին

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ ԳՊ/ԳԱՊ/ Գ. Խաչատրյանը

Անդամներ՝ ԳՊ/ԳԱ/ Լ. Ոսկանյանը
Հ. Հարությունյանը
ԳՊ/ԲԱ/՝ Ս. Պետրոսյանը
Ս. Դավթյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ ԳՊ/ՄՀմ Մ. Նիկոլյանը

1. **Ընդունել ի գիտություն**, որ «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերության /ՀՀՌՑ/ կարիքների համար Երևանի H=308մ բարձրությամբ հեռուստաաշտարակի մետաղական կոնստրուկցիաների հակակոռոզիոն պաշտպանիչ շերտի վերականգնման և ներկման աշխատանքների /Աշխատանք/ ձեռքբերման նպատակով ս.թ. հունիսի 20-ին էլեկտրոնային ARMEPS համակարգով հայտարարվել է «ՀՀՌՑ-ԲՄԱՇՁԲ-18/19» ծածկագրով բաց մրցույթ /Մրցույթ/: Հայտերը բացվել են էլեկտրոնային www.armeps.am կայքի միջոցով ՀՀՌՑ-ի վարչական շենքում, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95 հասցեում, հուլիսի 6-ին, ժամը 15.00-ին: Նիստին ներկա են գտնվել լրատվամիջոցներ, այդ թվում՝ Շանթ, Կենտրոն, ԱՐ և այլ հեռուստաընկերությունները:

2. **Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները, տվյալները**

| N | Մասնակցի անվանումը | էլ. փոստի հասցեն | ՀՎՀՀ |
|---|---|---|---|
| 1 | Պրոթերմ ՍՊԸ | emilchatinyan@gmail.com | 02253748 |
| 2 | ԴԱՎԻԹ ԷՆԵՐՋԻ ՍՊԸ | info@denergy.am | 00114704 |
| 3 | Մոնտաժտրանսշին ՍՊԸ | montagetransshin@mail.ru | 02266448 |

3. **Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին**

3.1 Պրոթերմ և Մոնտաժտրանսշին ՍՊ ընկերությունների կողմից ներկայացված հայտերում առկա են «ՀՀՌՑ-ԲՄԱՇՁԲ-18/19» ծածկագրով հրավերով (Հրավեր) պահանջվող փաստաթղթերը և համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

3.2 ԴԱՎԻԹ ԷՆԵՐՋԻ ՍՊԸ հայտում բացակայում է Հրավերի 7-րդ կետով սահմանված հայտի ապահովումը, որը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով, որի չափը հավասար է մասնակցի գնային առաջարկի հինգ տոկոսին:

4. **Մասնակիցների առաջարկած գները, նախահաշվային գինը**

ՀՀ դրամ

| N | Մասնակիցների անվանումը | Հայտի ապահովում՝ Բանկային երաշխիք /Բ/ կամ կանխիկ փող /Կ/ | 1 չափաբաժին Երևանի H=308մ բարձրությամբ հեռուստաաշտարակի մետաղական կոնստրուկցիաների հակակոռոզիոն պաշտպանիչ շերտի վերականգնման և ներկման աշխատանքների ձեռքբերում | | |
|---|---|---|---|---|---|
| | | | Նախահաշվային գին՝ 83 990 314 ՀՀ դրամ , ներ. ԱԱՀ | | |
| | | | արժեք | ԱԱՀ | ընդհանուր գումար |
| 1 | Պրոթերմ ՍՊԸ | /Կ/ 3 500 000 | 56 800 000 | 11 360 000 | 68 160 000 |
| 2 | ԴԱՎԻԹ ԷՆԵՐՋԻ ՍՊԸ | - | 54 000 000 | 10 800 000 | 64 800 000 |
| 3 | Մոնտաժտրանսշին ՍՊԸ | /Բ/4 000 000 | 57 735 144 | 11 547 029 | 69 282 173 |

**5. Հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել՝ փաստաթղթերի ուսումնասիրելու նպատակով:**

Նիստը շարունակվել է 10.07.2018թ. Ժամը 15.00-ին:

5.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետով՝ մերժել ԴԱՎԻԹ ԷՆԵՐՋԻ ՍՊ ընկերության հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

5.2 Ղեկավարվելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով՝ Պրոթերմ ՍՊ և Մոնտաժտրանսշին ՍՊ ընկերությունների կողմից ներկայացված հայտերը գնահատել բավարար և 1 չափաբաժնով ճանաչել

ա) Պրոմթերմ ՍՊԸ-ն՝ առաջին տեղը
բ) Մոնտաժտրանսշին ՍՊԸ՝ երկրորդ տեղը զբաղեցրած մասնակիցներ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

5.3 Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ ՀՀ ԿԱ Պետական եկամուտների կոմիտեից կատարել հարցում՝ Պրոմթերմ ՍՊ ընկերության՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

5.4 Ղեկավարվելով Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով առաջին տեղը զբաղեցրած մասնակցից պահանջել երեք աշխատանքային օրվա ընթացքում մինչև 13.07.2018թ. ժամը 15.00-ը ներկայացնել Հրավերով սահմանված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը, նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

5.5 Գնահատման նիստը հրավիրել ս.թ. հուլիսի 17-ին, ժամը 12.00-ին, ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95 հասցեով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

Հանձնաժողովի նախագահ՝ Գ. Խաչատրյան

անդամներ՝ Լ. Ոսկանյան

Հ. Հարությունյան

Ս. Դավթյան

Ս. Պետրոսյան

քարտուղար՝ Մ. Նիկոլյան